

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 Հայաստանի Հանրապետություն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածը «պետական տուրքերի վճարումից» բառերից հետո լրացնել նոր պարբերությամբ.

«Արտակարգ դրության ընթացքում արտակարգ դրության տարածքում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման սահմանափակման դեպքում տվյալ գործունեության տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձաց, ում տարեկան պետական տուրքի վճարման ժամկետն ընկած է եղել արտակարգ դրության ժամանակահատվածում պետական տուրքի վճարումն իրականացվելու է ՀՀ կառավարության կողմից սահմանված ժամկետում:

Արտակարգ դրության ժամանակահատվածում սահմանափակված ձեռնարկատիրական գործունեության տեսակների ցանկը, ըստ որի գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները կարող են օգտվել պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման արտոնությունից, սահմանում է ՀՀ կառավարությունը:»

Հոդված 2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման պարագայում, այն տնտեսավարողները, որոնց գործունեությունը սահմանափակված է եղել, սակայն նրանք արդեն իսկ վճարել են պետական տուրքի գումարները, բացառությամբ մինչև 2020 թվականի մարտի 16-ի կատարված վճարումները, համարվում է կանխավճար:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաժորդող 10-րդ օրը և գործում է 2020 մարտի 16-ից սեպտեմբերի 11-ը ընկած ժամանակահատվածում տնտեսական գործունեության առանձին տեսակների իրականացման սահմանափակմամբ ծագած իրավահարաբերությունների վրա: